ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 11 » « մարտի » 2024թ.**

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ա.Պետրոսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Սահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Սարգսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Բաղդասարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Մխիթարյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

Բացակայում է

Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան

1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման նպատակով նիստը կայացել է 2024 թվականի մարտի 11-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

2. Տեղեկատվություն՝ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների վերլուծության վերաբերյալ

2.1. «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ի, Ա/Ձ «Ջեմմա Թադևոսյան»-ի և Ա/Ձ «Արթուր Զավենի Ալավերդյան» կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

2.2. «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում և տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է թվաբանական անճշտություններ և անհամապատասխանություն.

2.2.1. չափաբաժին 9-ում՝ սխալ է հաշված ավելացված արժեքի հարկը և ընդհանուր գինը,

2.2.2. չափաբաժին 11-ում՝ ընդհանուր գնի տառերով և թվերով նշված գումարների միջև:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

3.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ.

3.1.1. 2024 թվականի հունվարի 31-ին ժամը 15:18:48-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 2-ին ժամը 15:00-ին տրամադրվել պարզաբանումը,

3.1.2. 2024 թվականի փետրվարի 5-ին ժամը 18:22:50-ին ստացվել է հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 7-ին ժամը 16:30-ին տրամադրվել է պարզաբանումը:

4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

4.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկների արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը՝

4.1.1. չափաբաժիններ 1, 2, 3, 4, 8, 10, 11, 12, 13, 15, 16, 17-ով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ին:

4.1.2. չափաբաժիններ 5, 6, 7-ով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ Ա/Ձ «Արթուր Զավենի Ալավերդյան»-ին,

4.1.3. չափաբաժին 9-ով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ին,

4.1.4. չափաբաժին 14-ով առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Ա/Ձ «Ջեմմա Թադևոսյան» ՍՊԸ-ին, երրորդ տեղ՝ «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ին:

5. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Պետրոսյան)

5.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը չափաբաժին 9-ի համար մերժել, քանի որ այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

5.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը՝ «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը չափաբաժին 11-ի համար հիմք է ընդունվել արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը:

9.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի չափաբաժիններ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17-ով հաղթող ճանաչել «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ին, չափաբաժին 9-ով՝ «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ին:

9.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել օրենքով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ գնման գնի 15 տոկոսի չափով:

9.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

9.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ա.Պետրոսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Սահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Սարգսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Բաղդասարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Մխիթարյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ. Զոհրաբյան